էր սերտել զառաջին դաշնադրութիւնն, զոր երկամաւ յառաջ կռեալ էր ընդ Ապաղայ Ղանի ինքնին լեռն՝ յառաջ քան զմահ հօր իւրոյ՝ ի հրաժարմանն ի թագէն՝ երթեալ առ նա (1269) . նուազել առաջնոյ ազդեցութեան ահի զօրութեան թաթարաց, և յաւելուլ պնդութեան յամառութեան Սուլտանացն Եգիպտոսի, և առանձինն ռիութիւն սոցա ընդ Հայս, ստիպէր զՍպարապետն արդ ի ծերութիւն խոնարհեալ՝ երկրորմբ թեւարկել, — և նորոյ երիտասարդ թագաւորի թողին իւրոյ և զղղրելոյ տէրութեան աշխարհին, որ յետ 46 ամաց նոր ստանայր զյիսապետ, և առաջին անգամ հայրենի պայազատութեամբ, — քաղաքագիտութեամբ և դաշնակցութեամբ՝ ասեմ, արտաքուստ ի հեռուստ, խորհրդակցութեամբ և արութեամբ սրտի և զինու ի ներքուստ ի մօտուստ :

Այս վերջին հնարք, զինուորականն արուեստ, որ և առաջին և սեփական և հնազոյն արուեստ էր իւր, եղև իբրու հանապազօրոգեան նմա զործ, և ի միջոց ժամանակի երկրոցուն տարադէմ ուղևորութեանցն, և առ Հեթմով և առ լեռնիւ, թէպէտ և՛ որպէս կանխաւն ասացաք՝ սակաւք ի բազմաց ի գործոց անտի նորա հասին մեզ յիշատակաւ . յորս և նշմարեմք զնա ոչ միայն իբրև զօրապետ մեծ շարժիչ բանակի, այլ և իբրև զօրական ստակական նահատակել ի պատերազմունս : Որպէս ի մարտի ուրեք ընդ զօրս Ռուզնէտոտին սուլտանի Իկոնիոնի՝ յաջորդին խօսորովու, յամի 1259, զլմեկոյ ի թափել զբերդ մի զոր Հայոց հանեալ էր ի նմանէ, յորժամ թշնամիք ի վտանգ մահու արկին զվահրամ տէրն Համուսի զփեսայն Սմբատայ, և նիզակ եղեալ ի չորեցունց կողմ և մանց, որպէս Պատմին ասէ, յիբեարս մղէին, և ոչ կարէին ընկնուլ զնա . և զայն տեսեալ արիագոյն զինուորն Սպարապետն Հայոց Սմբատ՝ հարազատն և արքային, և առեալ նիզակ զնայր ի վերայ, և զիթաւալ ի նոցանէ յերկիր ընդ կենդոր, և ազատէր ի նոցանէ զփեսայն իւր վահրամ, և քաջապէս մղէր զնու և սա յիշմանա իւրեանց » : — Դարձեալ, յերկրորդում ամին, յորժամ ահաւոր քան զՍուլտանն զայն յարեալ թշնամի վայրագասուն խարամանն, (յորմէ մինչև ցարդ նահանգ մի միջերկրեայ Կիլիկիոյ, Լիկայոնիոյ և Իսաւրիոյ՝ Գարաման կոչի), ըստ անկարգ հրոսակի սևագունդ թուրքմանացն շուրջանակի զահ

րեւելս ի գերութենէ նոցին . ես ինքնին տեսի յիսուն ռիւսս գերեաց զորս կաշեալ թագաւորին առաքելք ի վաճառ հանել :

Գիտութիւն լիցի և այս, զի Սրբազան Պապն առաքեաց հրեշտակ առ Ղանն հարցանել զնա, եթէ իցէ քրիստոնայ, և ընդէր արձակիցէ զզօրս իւր աւար հարկանել զերկիր և կոտորել զքնու կիւս նորս : Որում եւս պատասխանի Ղանն . Աստուած հրաման ետ հարց իմոց և ինձ՝ առաքել զզօրս մեր ի սպանումն ազգաց չարաց : Իսկ վասն հարցմանն եթէ քրիստոնեայ իցէ թէ ոչ, ետ պատասխանի . Այոք . Աստուած գիտէ . իսկ եթէ և Պապն գիտել կամիցի՝ ինքնին եկեսցէ և տեսցէ և գիտացէ որպիսիք իցեն թաթարք :

Մինչև յայս վայր են բանք թղթոյ Գունգաստապէն Հայոց * :

* Յետին տողք բան պատմագրին Վինգենտեայ է, որ զի և 12 ամեք յառաջ քան զմեր հեղինակս մեռեալ է (1264), ապա առ կենդանութեամբ սորին Սմբատայ և Հեթմոյ՝ առեալ և յեռեալ է զթուղթ նորա ի Պատմական Հայեւոյ իւրում . այգբան վաղ հռչակեալ և հետաքննելէ դուրմ գրուածոյն, մինչև արգեք հրատարակեալ երկարապատում վիպաց Քարոզաց ոմանց որք յառաջեցին քան զՍմբատ հրեշտակութեամբ ի Հայրապետէն Հռովմայ և յոմանց յարեմտեայ թագաւորաց քրիստոնէից առ Ղանն :

իւր և զաւեր սփռելով, երկիցս եհար զգորս Հայոց յիսաւրիա, յաջողեցաւ Սրմբատ կորզել 'ի կորուսչացն դղեակ մի ամուր Մամիսն անուն, և զամս երիս ժուժկալեալ արշաւանաց և քինու բարբարոսացն, իբրն 'ի վերջնում նուազի զամիսս ինն զդէմ ունէր պաշարման բերդին, օգնականութեամբ արքայի եղբոր իւրոյ իսպառ վանեաց զթշնամին, նիզակահար խոցոտմամբ յոխորտ և անգոս. նիչ Խարամանին (1262), որ և յետ աւուրց 'ի վիրաց անտի մեռաւ, իսկ համա տիպ եղբայր իւր (Մնսուզ՝ 'ի նմին իսկ 'ի ճակատու մարտին օպանաւ :

Յետ սակաւ ամաց՝ նովին արքայիւ և միւսով եղբարքն Ոչնիւ՝ կոռիկոսոյ տերամբ, և համաշխարհական բանակաւն խաղաց ընդէմ Եգիպտացւոց, յամի 1265, 'ի մերձենալ նոցա 'ի սահմանս տէրութեանն Հայոց. զորոց պնդակազմ պատրաստութիւն տեսեալ՝ զանգիտեալ յետանահանջեցան թշնամիքն : Բայց 'ի զալ միւսոյ ամին՝ ոչ որպէս 'ի հերու կազմ միախումբ և պատրաստ գտեալ զմերսն, այլ յերիս բաժանեալ գունդս, հեռիս վայրօք բազմօք 'ի միմեանց, և միոյն ընդ արքայի գնացեալ առ զլիսաւորն թաթարաց կողմանցն, աշողեաց նուցա կատարել զկամս ոխութեանն, և խաւար ածել տանս կիրիկիոյ, գերութեամբ լևոնի արքայորդւոյ և սպանմամբ եղբոր նորին թորոսի, և բազում կոտորմամբ, աւերիւ և աւարաւ, Յայսմ վայրի թուի թէ և Սմբատ հեռի կայր յարիւնուշտ թատերէն, զի ոչ իւր տարեգիրք և ոչ այլք 'ի մերոց յիշատակագրաց յիշն գնա, այլ զերկոսին արքայորդիան՝ զուխս զօրականին. միայն Ասորին Ապուլֆարաճ (թերևս որ և յԱրաբացի գրչաց) համարի զՍմբատ աստանօր ևս 'ի պաշտաման սպարապետութեանն, ընդ նմին և զերկոսին որդիս նորին. այս ինչ յայտ է զի երրորդ մասն բանակին միայն գտաւ 'ի տեղի վտանգին 'ի կոչեցեալն Մաուի, ընդ արքայորդւոցն. և զի աղմուկ իմն չփութի անկեալ (որոյ պատճառ ոչ է քաջ ծա. նօթ) բազումք 'ի մերոցս 'ի փախուստ փութացին, « յաղմանէ չարին, ըստ « ժամանակագրին, առանց մարտի և պատերազմի » :

Մեծ և յոյժ կարեկէր եղնն այս հարուածք Հայոց, և սկիզբն նուազելոյ տէրութեանն նոցին. այլ ոչ լբուցին դբազուկս, թող թէ զսիրտ Սմբատայ. զի և յետ այնր ոչ դադարէր, որպէս առիւծ խոցեալ մռնչել չուրջ գալ զհրուրք սահմանօք, ուր և հարկն պահանջէր, մինչև 'ի վերջայս կենացն, և երիտասարդական աշխուժիւ եօթանաճամենի իսկ խիզախել 'ի մարտ. և 'ի հուսկ յետին ամս անդ երկիցս և երիցս վանեաց դասպատակ Եգիպտացւոցն : Իսկ 'ի վերջնումն նուազի ամենայն հանդիսից նահատակութեանցն, 'ի սկիզբն զարնայնոյ 1276 ամին, հանդիպեալ թուրքաժողով հրոսակին և հազարեկի Եգիպտական հեծելազօրու, զհալածումն նոցին և զիւր յաղթութիւնն յառաջ ևս վարել խանդալով, թէ կամաւ թէ ակամայ, յամենի անգրովաբէն՝ 'ի գահէ անտի փառաց և հրամանաց իւրոց, ուժգնագոյնս մղեալ՝ ընդ հարաւ ընդ բուն ծառոյ միոյ, և ոտնաբեկ վտանգեցաւ. այլ հանգոյն դասական զօրապետաց Պուտարբեայ՝ իրազեկ լեալ զի իւրքն յաղթեցին, գոհացաւ, և թոյլ ետ օրհանին պսակել զփառաւոր կենան՝ փառունակ ևս և արիւնընծայ մահուամբ, ('ի վեցերորդում աւուր ամսեան մարտի), ծայրակարմիր թևօք սլացեալ յերամն նահատակացն ազգայնոց, առաջնոցն հաւասարեալ և 'ի յետնոց ոչ գերազանցեալ Գունդասապն Սմբատ, այս ժոռնվիլ Հայոց. նմանեալ նմին քաջութեամբ և խելօք և թեւարկու-

Թեամբ 'ի վերայ թագաւորի հարազատին իւրոյ, որպէս նայն 'ի վերայ իւրումն մտերիմ թագաւորի Ս. Լուգվիկի. որպէս և երկոցուն թագաւորացն մեծ նմանու թինն է գործովք արութեան և սրբասէր բարութ, և անձնական իսկ տեսաւորու թեամբ և բարեկամութեամբ 'ի Կիպրոս և փոխադարձ ընծայաբերութեամբ ։ Դանօթք պատմութեան ժոննվիլայ յիշեցն անշուշտ զաղուական պարագայ այցելութեան Հայոց առ թագաւորն փռանկաց Սաւրք Թագաւոր կոչելով զնա՝ որպէս զընկին իւրեանց սովոր էին կոչել զՀեթումա՝ Եթէ և Սմբատ յետ դարձին յառաջին ուղևորութենէն 'ի Թաթարա՝ ժամանեաց տեսութեան նորին, հանգիպեցաւ ուրեմն և պաշտօնակցին իւրում և նմանոյն . և երկոցին առաքինա գործ Սպարապետք առաքինասէր թագաւորացն՝ պնդապինդ սեղմեցին զայլ իրեաց՝ զհաւասարս 'ի կորով սուսերի և 'ի զիծ գրչի, յանմահութիւն անձանց և ազգի և տերանց՝ որոց 'ի սպասու կային։ Եւ քան զո՞ գերազանցեաց, զայն օտարաց թողում զուգակշռել. բայց ոչ մոռացայց զպանծալի խոստովանութիւն պատմաբանութեան փռանկաց Գունդստապլին, եթէ բազում ասպետք իւրոյ թագաւորին՝ ականջաւորք և ականատեսք ասպետական հանգիսից և կրթանաց նիզակակցին Հայոց թագաւորի և մերայոցս, թողեալ զիւրեանց բնիկ տէրն զԼուգվիկ՝ յիւր բաղդն, զինուորեցան հայկազնոյս Հեթմոյ. և որ ևս պանծալին է, ոչ զղջացան, ասէ, ընդ ընտրութիւն իւրեանց, զի ոչ ևս դարձան յետս . այլ խառնեցին զկեանս և զբաղդ իւրեանց և զփռանկական եռանդն ընդ հայկակա նին... Այլ մի արդեօք և մերս ածինախառն եռանդն յանկարծ վառ առեալ՝ հանգոյն խրոխտավաղ երիւարին Սմբատայ՝ անդրադոյնս վարիցէ զմեզ քան զնպատակ ասպարիզիս։ — Ներեսցէ ընթերցող՝ որ ոչն հաճի և հետեի, և գիտեսցէ, զի զպարտս երախտադիտութեան և զյիշատակ 600եակ սարեղարձին Սմբատայ՝ ոչ կարէաք անխտել յառաջադրութենէս, ընծայելոյ զգրաւոր վաստակ մի նորին, զթարգմանութիւն Անիզդաց Անտիոքայ՝ առ գրասէր հասարակութիւն, և առանձինն առ Ալզո՝ որոյ այնքան յիշատակք և գործք են յարեւելս, և 'ի Հայս մանաւանդ։ Տի նա, իցէ հնար անթուռդ կալ սրտի ազգայնոյ, կենդանի միայն թէ իցէ, 'ի հնչել ժամու յիշատակի այսքանոյ փառապատկ կինաց և մահու։ — Այլ արդ ընդ անուանակցացն առաքինեաց նախնեաց՝ ընդ Բագմայաղթին և ընդ Խոստովանողի՝ կաճառակից թողեալ զՍմբատ, և պատկառաւոր պատեալ զսուսեր Սպարապետին, մատիցուք բանասիրաբար սքօղել զգրիչ հեղինակին¹։

1 Յիշատակագիր ոմն ժամանակեկից այսպէս ասէ զՍմբատայ մահուանէն. « Ինոյն ամի (1276 զօրք Սուլտանին Մարայ) գարձեալ գարձան 'ի Սիս. և Տէր ոչ յաղողեաց նոցա, այլ փակեաց զնոսա ընդ ձեռամբ Լեոն թագաւորի, և 'ի սուր մաշեաց զնոսա. և մնացեալքն փախստայ անկան 'ի խորս իւրեանց։ Իսկ Սպարապետն Հայոց մեծաւ քաջութեամբ կացեալ 'ի մէջ նոցա. և յօրժամ ել 'ի պատերազմէն՝ երիվարն հարեալ զնա ընդ ծառոյ միոջ՝ ոչ կարաց տանել ցաւուն, քանզի յոյժ ծերացեալ էր. գնաց 'ի Սիս, և տակաւ ինչ ապրեալ՝ բարի խոստովանութեամբ նընջեաց ընդ հարսն իւր, 'ի Քրիստոս Յիսուս. և մի յիշեացի մեզք նորա առաջի Աստուծոյ, այլ ընդ Աբրահամու և ընդ Սահակայ կարգեսցի յարքայութեանն Աստուծոյ »։

Իսկ այլ ոմն յիշատակագիր աստուածեղէն գրոց՝ զոր նոյն ինքն Սմբատ տայր ընդօրինակել, ներկուռ և ճարտարագոյն ևս գրչաւ գողջիւր 'ի վեր քան զիւրոյ դարուն ժամանակի, ճոխագոյնս

Յիշեցաք 'ի վեր անդր եթէ գողջիր Սմբատ միայն է 'ի ժամանակս Յիլիկեցի հարստութեան մերոյ՝ ծանօթ Պատմիչ, և առաջին աշխարհական գրիչ. որոյ գրուածք ըստ արուեստի բանահիւսութեան ոչ ունին ոճ և լեզու զասական 'ի մերումս դպրութեան, որում է ոչ փոյթ էր նորա. նա մանաւանդ կամաւ ընտրէ զգիրիմաց և ռամկալուր լեզու ժամանակին, գէթ զայն զոր ազնուականք լսէին և վարէին յընտանի բարեբիկ զրուածս. և պարծի իսկ ընդ ընտրութիւնն՝ յօգուտ հասարակաց իմացման. յոր սակս արժան է և մեզ իրաւունս տալ նմա.

աւանդեալ էր. այլ, աւաղ, զի անկեալ յետին թղթոց մատենին՝ թերակատար մեզ մնայ բանն և անծանօթ բանասացն. սակայն և մնացուածն այս ախորժեւի մեզ, լիցի և մերախոհիցս, յընթեռնու, որպէս զի 'ի գեղեցկագիր պտածնից մերոց դասափառ հեղինակաց:

« Աստուածարեւոյ անձանց և յԱստուած խրախուսելոյ՝ ոչ էրբէք յայլ ինչ իրս է պարապել, քան թէ յԱստուած զօրանալ, և նովաւ հանդիսանալ, միշտ 'ի գերակատարն գլուխ՝ ունելով զանկ ոգւոյ: Ըստ Իմաստնոյն խրատու, Լուսատու ոգւոց և անսայթաց պողոտայ ոտից զպատուիւրանս Տեառն ունէլ առ ինքեան և ընդ ինքեան. որովք իմացեալ ասեւ իսկ զճանապարհս չարեաց հրաւ հանդեակք: Յորոց մի է և իմս առաջարկեալ պսակաւոր (Սմբատ), երկընդմէք գերազարդեալ անձն, աշխարհայնութիւն ասեմ է գերաշխարհայնութիւն բարգաւաճեալ: Որ թէպէտ և վերնոյն Սիովնի որդւոց՝ ազատին և ամենամաքբին՝ անձա՛հ իմն է զստորայնութիւն տոհմէ ճառել, սակայն չէ ինչ անըմբռն զպատուածայնոց զարմից և զլոգւորն Աստուծոյ օծեալ ցեղից, և զընտիրն 'ի մէջ համազնէից՝ լինել և կոչիլ, մոռացութեան գրուածաւ աղաւաղել, թոյլ տալ. այլ լրել և ճառել 'ի փառս Աստուծոյ և 'ի նախանձ ապագայից նոցին շառաւեղաց:

« Արդ յորժամ կամք վերին հրամանին խնդայր, ըստ Պողոսի, 'ի նեղութիւնսն, 'ի վիշտսն և յայլն ամենայն 'ի Տեառնէ եկեալ խրատսն, զի մի ըսդ աշխարհիս դատապարտեսցի. — ևս, զի պարտ է, ասէր, հատուցանել նեղելոցն հանգիստ և մոռտ 'ի յաւիտենական կեանսն. զի ոչ եթէ անխրաւ ինչ է Աստուած՝ մոռանալ զնեղութիւն և զտաքապարտ կեղեքումն. — այսպիսի բարեյոյս հրճուանօք ընդ զբաւն տաժանմունսն բերկրէր, նետք աղայոց զվէրսն վարկանելով, անթարչամ 'ի նոյնն իբր զԱնանանսն 'ի մէջ հրոյն կեայր, զբոսանս զճաղկերանդ և ոսկեզարդ նկարս (գրոցս) առնելով: Այլ ոչ զբերեց յաւարտ զստորաշածապատման այս աւետարան՝ 'ի կեանսն իւր տեսաւ նել, համայնիւ Խոհեմն այն ծերունին մեծիմաստն Սմբատ:

« Զի յամսն յայնսիկ յարձակմունք. քրիստոսաւանեաց Տաճկացն 'ի տանէն Դամայ Դամասկոսի և Եղիպտոսի, միահեծանեալ բռնակալութիւն խստափրտ երկրորդն Փարսաւոնի՝ Մէլէք Տաւր Պտուրկարն կոչեցեալ, արաքաբադ իբր զքանասար գայլս արշաւէին 'ի կողմանս Սեւան կողեցեալ լերին: Եւ յաւարտ միում պատահեալ քաջն Սմբատ որդւովք և յորով համազնեայ նիզաւհակցօք, աղբային իսկ, յախմայ կամս և յանկարծ վայրս անզգուշաբար դիպեալ բաղում է քաջազն գնդի թշնամեացն, զորն թագ մերային որեարսն գանեալ հարուածիւք՝ յետս կոյս փախստեայ գարձուցին, սպանեալ զամաս: Զոր տեսեալ մեծն Սմբատ, հապա՝ զթափ երկվարին տուեալ և մեծաձայն բարբառով 'ի նիզակակցութիւն զՔրիստոս թագաւորն կարգացեալ, իւրայովքն առկեծաւ բար յարձակեալ 'ի նոսա, և իբր զերամակս զըռց զիբեարս՝ զնոսա հարեալ 'ի սուր սուսերի մօշեալ, որ անդն էին՝ սպան զնոսա: Յորում վայրի խաղացին 'ի մերսն բացակայ գունդք թշնամեացն, իբր զփոշի 'ի հոլմոյ բերեալ, կամ զաւաղ յալեաց դիզեալ, յորովք 'ի քրիստոսաւոր աւագանւոյն Հայոց վախճանեալ՝ անթաւառն արժանացեալ գտան պատկի: Իսկ քաջն Սպարապետ՝ մեծ ոռիւրս 'ի պատահեալն իւր գործէր, ուր արագ հաւաքեալք նախկի արեան քաջն ծարաւիք, իբր զտապարուորս 'ի փայտահարս՝ յարձակեալք 'ի նա ցուլն գէրք և շունն բաղովք՝ չըլապանէին. յորոց ոչ սակաւս սատակեաց արին այն քաջա.....»

և ոչ այսչափ միայն, այլ և գովել և խնդալ. զի որչափ և պարզ և համկտբան է լեզու նորա, ոչ միայն անթերի ունի զտիպս ազգայնութեան, այլ և ախորժալուր իսկ է, և շատ իսկ ողորկ և քաղցր քան զժամանակակից գրուածս փռանկաց 'ի լուր ակընչաց այժմեան սերընդոց նոցին. և օրինակ հաւատարիմ ընծայէ մեզ զբարբառոյ այնր դարու և մարդի, վասն որոյ և շնորհս կայցուք նմա: Բայց պատուականագոյն ևս քան զբարբառն՝ են բանքն. և թէպէտ համառօտ ինչ թերթիք են Տարեգիրք նորա կամ Պատմութիւնն, զոր և մարթ է առաջին և գլխաւոր գործ նորին համարել, այլ զի ոչ զայլոյ ուրուք գտաք ցարդ ոճով ինչ պատմական ճշայնց իրաց՝ դարձեալ բազում սիրով ողջագործելի են մեզ պատմական յիշատակք Միքատայ, եթէ ինքն իցէ սկզբնագիր հեղինակ բանիցն, և եթէ, որպէս հաւանագոյն թուի ըստ նախայիշեալ բանից նորին ինքեան՝ միայն քարգմանող պատմութիւնն, այսինքն՝ ըստ օգտասէր ընտրութեան իւրոյ՝ պարզող նախագիր գրաբառ յօրինուածոյ անծանօթի ուրուք, կամ առ 'ի բազմաց հաւաքող, սկիզբն յիւռհայեցւոյ Մատթէոսէ արարեալ, և յեռեալ յիւրմէն զիւրոյ ժամանակին դէպս, յաւելմամբ և յապաւմամբ: Կարծեացս այսմ հաւաստիս ընծայեաց մեզ 'ի ժամանակի գրութեան այսց բանից մերոց՝ բազդն իբր արգադիր հարկատու Միքատայ վերայայտնելով հնագիր տարեգիրս մի Կիլիկեան յիշատակաց, նման այլ ոչ համանման Միքատայն. որ և յստակագոյն գրաւոր ոճով և բազում յիշատակաց առաւելութեամբ ժամանեալ 'ի կարգս վիպաց ցամա 1272 (Չիլ թուական), թերատ մնայ մատենն: Ոչ է յայտ թէ ցոր ամ հասուցեալ էր և Միքատայ զիւր գրածն, զի պատմութիւնն յառաջ 'ի յընծայեալն նմին գործ՝ 50 և 60 ամբք անդր քան զկատարած կենաց նորին, և զիտեմք զի շարայարելով յաւել զայն Պաղտին մարալախտ տէրն Նղրի, խնամեցեալն զարմին Միքատայ: Այս Տարեգիրք ոչ միայն հայերէն տպագրութեամբք ծանօթ են մերայոցս, այլ և կրկին փռանկ թարգմանութեամբ և տպագրութեամբ հայագիտացն Լանկլուայ և Տիւրքիէ՝ ծանօթացեալ արեւմտեայց, և դասակարգեալ 'ի շարս Պատմաց Խաչակրաց, այն զոր 'ի սկզբն բանիցս յիշեցաք. և բազմաց օգտեալ 'ի բանից նորին:

Ջատ 'ի Պատմութենէ աստի և 'ի թղթոյն որ առ քոյր իւր և առ քեռայրն, զոր յառաջ յիշեցաք, են Միքատայ երկու ևս կարեւոր երկասիրութիւնք, թէպէտ և այսք ևս ոչ ինքնագիր հեղինակութիւնք, ըստ նախագրելումդ սակի, այլ գողջիր և ոչ ինչ պակաս յայնմ շնորհէ և յարգեանց, որպէս և կարծեմք դատել և այլոց ընդ մեզ. երկրորդն ևս գործք համասեռք են կամ հոմանիւթք. մին, որպէս գուշակէ ընթերցողն իմ, է բուն նպատակ բանիցս Անիիցն Անտիոքայ, միւսն մարթի անուանիլ Ասիկք Հայոց. և զի չեն մեզ կամք 'ի ժամուս հրատարակել զայս՝ որպէս զառաջինն, տացուք ծանօթս ինչ զայնմանէ: Ազգս Հայոց, որպէս ծանօթ է մեզ և բազմաց, ազգ հին է յոյժ, և գրեալթէ տեսող և վկայ անցից նախնի ասիական ինքնակալ տէրութեանց, կեցեալ ընդ հնադոյնս և ընդ հզորագոյնս ազանց. և թէպէտ ոչ և ինքն ընդ հզորագոյնս և ընդ վարիչս աշխարհի դասեալ, այլ և ոչ իբրեւ զսինքնոր ժողովուրդ մի սպասարկու. այլ և հզորագունիցն անգամ երբեմն հակառակեալ զինու զօրութեամբ, և բազում անգամ նիզակակցութեամբ պատուեալ. որոյ եղեն յառաջ քան զԿիլի-

կեցեցոյս մի քան զմի երիցադոյն երեք ևս սեփականագոյն հարստութիւնք, Բա-
գրատունեացն յԹԻՅԱ դարս, Արշակունեացն դարու և կիսով կանխեալ քան զգա-
լուստ փրկչին մերոյ և տեսեալ ց'428 ամ նորին, որ և ծանօթագոյն է յընդհա-
նուր պատմութեան, յարընչութեամբք ընդ ինքնակալաց Հռովմայ և Բիւզան-
դիոնի, յաւուրցն Սիլլայ և Լուկուլլայ մինչև 'ի ժամանակս Թէոդոսի փոքու. 'ի
բաց թողլով զառաջինն զընիկ Հայկազանց հարստութիւն, որոյ սկիզբն 'ի մթինսն
և 'ի դիւցազնականսն անուանեալ ժամանակս ելանէ, այլ գէթ վեց և եօթն դարուք
յառաջ քան զՔրիստոս ստուգադիր յիշատակը հաստատի, և ըստ բեռնագիր
արձանաց 'ի վեր ևս ելանէ երկուք կամ երկուք դարուք: Արդ այսքան երկար ժա-
մանակաց ազգային իշխանութիւնք և վարչութիւնք պահանջէին հարկաւորա-
պէս և օրէնս ինչ հաստատունս, թէպէտ սեպհականս և թէպէտ եկամուտս 'ի
գլխաւոր և տիրապետ ազգացն՝ որոց յաճախ 'ի հարկի և 'ի հնազանդութեան
կային Հայք, թէ և էին նոցա առանձինն նախարարք և թագաւորք իսկ: Սա-
կայն չիք ուրեք ստոյգ նշանակ օրինաց Հայոց. բազում ինչ գեղեցիկս աւանդէ
մեզ Մովսէս Խորենացի՝ իբրու 'ի Մարիբասեան մատենից՝ զկարգաց և օրինաց
վաղարշակայ հեղինակի արշակունի հարստութեան մերոյ, այլ ոչ՝ թէ և գրով
սահմանեալ և հրատարակեալ իցէ. հնագոյն գրուած կամ թարգմանութիւն
օրինաց հասեալ առ մեզ 'ի մերոց նախնեաց՝ Որէնք Բիւզանդացի կայսերացն
են, և այն ոչ Թէոդոսին և Յուստինիանու, այլ Լեոնի, Կոստանդեայ և Եռինեայ,
որովք 'ի դէպ էր վարել Բագրատունեաց մերոց, եթէ չունէին այլ օրինադիրս:
Մի միայն օրէնք կամ մանուանդ հրաման վերջնութեւ թագաւորի այսր Հարըս-
տութեան, Յովհաննու-Սմբատայ (1020-1042) քնայ արդ, և այն յեղեալ 'ի լա-
տին բարբառ՝ 'ի գաղթականէ մերազնէից 'ի Լեհս, որ արգելու զվաճառ յաւուրս
տէրունականս 'ի թագաւորեալ քաղաքի իւրում յԱնի: Բայց 'ի ժամանակս նորա
և յառաջ և յետոյ ևս, որքան տկարացաւ և հերձաւ ազգային մեծութիւն Հայոց
և բազմացան նոցա մանր թագաւորութիւնք և ինքնակաց իշխանութիւնք, 'ի
քնաս միաբանական ուժոյ և լրութեան ազգին, գէթ զազգային ոգի և սովորու-
թիւնս առաւել իմն խնամով տածէին. և այս փոյթ յորդոր լինէր խնդոյ սե-
փական օրինաց և իրաւանց, կամ թէ ազդողագոյնս զգացուցանէր զպակասու-
թիւն նոցին և զկարօտութիւն. և բազում անգամ խնդիր լինէր իշխանաց և ե-
կեղեցւոյ առաջնորդաց և գիտնոց վասն իրացս այսոցիկ. այլ ոչ որ իշխէր բռն
հարկանել զայսպիսոյ մեծ և դժուարին գործոյ, և ոչ մանաւանդ յուսայր ընդ-
ունելի առնել. և ժամանակն յառաջէր, և անուանեալ թագաւորութիւնքն և
տէրութիւնք մի ըստ միովէ թօթափէին յահէ և 'ի զինուց Սէլջուգեան արշարհա-
կալաց: Եւ ահա 'ի հուսկ 'ի վերջին յայն ժամանակս և յաղօտ աղօտ առկայծ-
ման Հայ վառարանի, յելս ԺԲ դարուն, յամի 1184, վարդապետ ոմն, հմտա-
գոյն և հռչակաւոր 'ի վարդապետս ժամանակին յարեւելեան Հայս, Միխիթար
Գոշ, յորդորեալ 'ի բազմոց, և մանաւանդ 'ի կաթողիկոսէն Աղուանից և յինք-
նագլուխ իշխանաց այնր մարզի, ձեռն արկ և գլխաւորեաց Դաւադաւաւաւագիրք
մի, հաւաքեալ, որպէս ինքնին ծանուցանէ 'ի սկզբան գրոցն, 'ի էին մովսիսական
օրինաց, 'ի կանոնաց եկեղեցւոյ, 'ի Բիւզանդական օրինագրոց, և յանգիր ազ-
գային և 'ի սահմանակից ազանցն աւանդից և սովորութեանց, և շատ ինչ յիւր

ուրոյն խելամուտութենէ . և զբովանդակն առանց ոճով ինչ տրոհման 'ի գիրս և 'ի մատենս՝ զատոյց յ'251 զլուխս, զատ 'ի տասանց յառաջաբանին, որպէս և դատանին 'ի բազում՝ հին օրինակս . յորոց հնագոյն մի և թերեւս սկզբնագիր հեղինակին կայ 'ի ձեռին մերում . այլ բազում ևս օրինակք՝ և ոչ յեանագոյնք՝ սուղ ինչ համառօտութեամբ և այլայլութեամբ կարգի և բանից՝ բովանդակին 'ի 177 զլուխս : Վաղ վաղ ծաւալեցաւ Դատաստանագիրք Մխիթարայ 'ի Հայս, թէ պէտ և գրեթէ անդէն 'ի վերայ եհաս իսպառ բարձումն մնացելոց մանունց իշխանութեանցն, և երկրաթունդ ոտն թաթարաց կոխեալ հարթեայ զամենայն զլուխ բարձրացեալ . համայն և այնպէս 'ի պատուի մնացին գիրք Մխիթարայ, քանզի և եկեղեցականաց օժանդակէին :

Ի նմին ժամանակի յորում նուազէր 'ի Մեծ Հայս ազգային ինքնակացութիւն, ամբառնայր 'ի Եկեղիկա նոր պետութիւն հայկական, որ յեւ թի դարու և 'ի սկիզբն թի Գն՝ ձեւացեալ և կազմեալ 'ի թագաւորութիւն՝ խոհական հնարիւք Լեոնի՝ պահանջէր և օրէնս հաստատունս : Եւ անդէն իսկ մինչդեռ ևս խոստմունք և պատրաստութիւնք լինէին թագաւորութեանն՝ հոգային զգաստքն և զօրինացն . և տեսեալ զնախնեացն պակասութիւն՝ սրագոյն և սրբագոյն հանճար ժամանակին՝ Ս . Ներսէս Լամբրոնացի՝ ձեռն արկ հաւաքել 'ի Յունաց և 'ի Լատինաց կանոնս և օրէնս վասն տան թագաւորին և զինուորական դասուն : Բայց արագահաս վախճան կենաց նորին և նորամուտ սովորոյթք ասպետականք և պայազատականք, և ազգախառնութիւնք ընդ Եւրոպեացւոց, պահանջէին և օրէնս և սահմանս նորս . և մինչև էր հաստատեալ ինչ անյեղի՝ վարէին անշուշտ, որպէս և կարէին, ցկէս թի դարուն՝ ըստ սովորութեան Ասիական մեր ձաւոր իշխանութեանց Լատինաց, որպէս և տեսաք 'ի վերոյ 'ի գէպս խնդրոյ ժառանգութեան Կոնստանտին, և ըստ իւրեանց աւանդական վաղեմի ազգային հրահանգաց, գուցէ և Դատաստանագրովք Մխիթարայ՝ որում անմարթ էր չգտանել մուտս 'ի Եկեղիկա, ուր ինքնին հեղինակն այն հուշակեալ և 'ի պատուի էր : Այլ իբրեւ պէտք հաստատուն օրինաց՝ քաղաքայնոց և եկեղեցականաց օր ըստ օրէ զօրանային, յարեաւ մեծահոգի և շատահանճար Սպարապետն Սմբատ, երկրորդ վարիչ և ուղղիչ թագաւորութեանն Հայոց՝ յետ մահուան հօր իւրոյ, և ինքնին խոյզ և խնդիր արարեալ՝ եդիտ զգիրս Մխիթարայ Գոյի, զոր ըստ նախայիշեալ համառօտ պատճենին բովանդակելոյ 'ի 177 զլուխս՝ նոր 'ի նորոյ յեղեալ յիւրական ռամկալուր բարբառն, և հրատարակեաց, անփոփոխ պահեալ զթիւ գլխոցն, և բազում մասամբ վկարգն ևս և զբանսն . այլ ըստ պահանջել հարկի ժամանակին կամ սովորութեանց աշխարհին՝ յաւելուածով և յազաւմամբ, ընծայեաց նոր իմն Օրինագիրս, յամի 1265 . և « գրեցի զսա, ասէ, վասն « հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և վասն աշխարհի դատաւորաց և թագաւորաց, և զսիրտ բանիցն առեալ եդի համառօտաբար... և պարտ ու ար... « ժան համարեցայ վասն թագաւորացն գրել իրաւունս, զի նոքա յԱստուծոյ « են կարգած և յԱստուծոյ տեղն 'ի յերկրի են » : Վերջին բանքդ ակնարկեն յառաջին գլուխ օրինագրոյն՝ որ զիրաւանց թագաւորաց ճառէ, և զայն նախակարգեալ է Սմբատ՝ յառաջ անցուցեալ 'ի կարգէն Մխիթարայ : Որքան և չիցէ սկզբնագիր Սմբատայ այս գործ, և ոչ սոսկ թարգմանութիւն է, այլ և այսու

իսկ պարզէ զէզըւն Մխիթարայ, և յամենայնի զպատշաճն ժամանակի և երկրի իւրում ջանայ յարմարել, որով և բազդատութիւն ընծայի արեւելեայցն սովորութեանց ընդ արեւմտայնոց, մանաւանդ նորամուտ Ասիիզացն, առ որ դառնայ արդ բանս :

Եթէ ուստի եղիտ Սմբատ զԱնիզն Անտիոքայ, որպէս ինքն անուանէ, և վասն էր թարգմանեաց, զայն ինքնին պարզապէս ուսուցանէ մեզ յԻւրադիր յառաջաբանին¹. այլ թէ երբ եգիտ և փոխեաց 'ի հայ, և երբ յօրինեալ էր սկզբնադիր մատենան այն, կամ է ինձ սակաւութեան զայսոսիկ, քանզի ոչ է նորա նշանակեալ զթուական թարգմանութեանն, որպէս տեսաք նշանակեալ զՕրինագրոցն. և հարկ է թէ փոխանակ տարէթուի՝ անձինքն յիշատակեալք 'ի նմանէ՝ բացած անուցեան և զժամանակն, Ջարմանալի իմն է, զի ոչ յԱսիիզս Երուղէմի՝ (զոր քեռայրն Սմբատայ Յովհ. Իպլէն հաւաքեաց յառաջ քան զհասարակել թի դարու), յիշին Ասիիզք Անտիոքայ, և ոչ 'ի ամա՝ Երուսաղէմին. բայց բան Սմբատայ, թէ « Սովորութեամբ այն (անտիոքեան) Անտիոքոյն կու գնայր ազգս « մեր և գարպասս Հայոց », յայտ իմն առնէ զի ճանաչէր նա և այլ Ասիիզս, բայց զԱնտիոքայն ընտրեաց իբրև զմերձաւորի և արդէն սովորելոյ յազգի իւրում և 'ի թագաւորութեան, Յերկոցուն օրինական գրոց անտի երկասիրելոց 'ի Սմբատայ՝ երիցագոյն թուի Ասիիզացս թարգմանութիւն. քանզի 'ի յիշատակաւրանի սորին յիշի միայն Հեթում թագաւոր, իսկ 'ի Դատաստանագիրսն՝ և Լեոն իբրև հրատարակեալ թագաժառանգ. իսկ յիշատակ հօր իւրոյ Կոստանդեայ, զոր ոչ կոչէ հանգուցեալ, չունի մեզ տալ փաստս ինչ, զի երկւք ամբք յառաջ գիտեմք զնա մեռեալ քան զյերիւրած այնց գրոց (Օրինագրոցն) : Բայց քան զհետաքննութիւնս զայս սզգային դպրութեան, հասարակաց գիտնոց՝ և մանաւանդ արեւմտեայցն՝ հետաքննելի ևս է հեղինակ և ժամանակ սկզբնադիր Անտիոքեան Ասիիզայն. զոր հարեանցի և թերակատար իմն նշանակէ թարգմանողս մեր՝ ասելով, « Ի Բրինձ Պըմընդին ժամանակն ». իսկ զի ամենայն Բրինձք կամ իշխանք Անտիոքայ Պեմունդ կոչէին, ո՞ր այն իցէ՝ առ որով « Սիր փէր տ' « Բաւընդէն, և Սիր Թումաս Մարաշախան, և այլ իմաստուն և գիտուն իշխա. « նայքն Անտաքոյ՝ էին գրով հաստատել » զԱսիիզքդ : Պահանջէ բանն զի այս Պեմունդ՝ չէր Զ՝ (1253—1274) առ որով թուի Սմբատայ թարգմանեալ, այլ երիցագոյն ոմն, կամ հայր նորա Ե Պեմունդ (1235—1253), և կամ մանաւանդ սորին նախորդ՝ Պեմունդ Դ (1201—1235). և սա ամենայնիւ յանկագոյն թուի ինձ. նախ զի բանն Սմբատայ հեռաւորութիւն ժամանակի ցուցանէ 'ի ներկայ Պեմունդէ. երկրորդ, զի Պեմունդ Դ յոյժ ծանօթ էր Հայոց վասն պէսպէս անցից որ յաւուրս նորա և մերոյս Լեոնի Բ, և յետ մահուան սորա՝ յետ և յառաջ թագաւորելոյն Հեթմոյ. երրորդ, զի և ինքն այս Պեմունդ վկայի քաջ հմուտ գոլ իրաւանց և օրինաց, (թէպէտ և ոչ գործովքն). չորրորդ, զի երկրորին զլիաւոր յօրինողք մատենին և այլքն յիշատակեալ անձինք՝ հնագոյնք են ժամանակաւ, և

1 Զոր գոյնն փափագողք 'ի տպագրեալ մատենին, զոր թարգմանութեամբ 'ի փռանկ լեզու հրատարակեցաք յայտ՝ ամի, վերընծայեալ ձեմարանի Արձանագրութեանց և Գեղեցիկ Դպրութեանց Փաշայատանի :

մինչև առ Սմբատ ընդ երիս ձեռս անցեալ եհաս. զի յօրինողն տուեալ էր առ Սիր Թանսէլ, և սորա տուեալ ցորդի իւր Սիր Սիմոն Գունդատապլ Անտիոքայ, և մեռեալ նախ քան զխնդրեւն Սմբատայ 'ի յետնոյս զգիրսն: — Արդ Սիր Մանսէլ որոյ յատուկ անուն է Ռոպերդ, յիշի իբրեւ Գունդատապլ Անտիոքայ 'ի Պարզեակերս Ռուբինի—Ռեմլնդայ թուին եղբօր Լեոնի՝ յամս 1207 և 1210, որպէս և 'ի Պարզեակերի միում մերոյս Լեոնի՝ 'ի նմին ամի: Իսկ որդի նորա Սիմոն նու վին պաշտամամբ յիշի 'ի պարզեակերի Զ Պեմլնդի յամի 1262: — Սիր Թոմաս Մարալախտն Անտիոքայ յիշի 'ի նոյն պարզեակերս Ռուբինի—Ռեմլնդայ յամի 1215, և յետոյ ուրեմն յամի 1237 'ի գործս Դ Պեմլնդի: Իսկ Սիր Փէր ա' Ռաւլնդէն (Պետրոս Տէր Արեւնդանի) երիցագոյն ևս թուի հասակաւ. Պր. Ռէյ 'ի պատուական մատենին Les Familles d'Outre-Mer, վկայելով զի անուանեն զնա հեղինակ Ալգաբանդիթեան Անդրաթովեայց (Lignage d'Outre-Mer) և Տիւ Գանժ, ոչ գիտեմ յինչ պատճառս նոյն համարի զնա ընդ Յովհաննու տեառն Ռաւլնդէի յիշատակելոյ յամի 1241, և այն իբր մեռելոյ. ինձ թուի Յովհաննէսդ որդի լինել Պետրոսի, զոր և գտի այդու անուամբ, Petrus de Ravendello, յիշատակեալ իբրեւ վկայ 'ի պարզեակերի միում Գ Պեմլնդի յամի 1200, յամս սեան յունիսի:

Արդ յայսքան յիշատակաց և թուականաց ամաց՝ հաւանեալ եմ թէ Անտիոքայ Անտիոքայ դործ Պետրոսի և Թոմայ իշխանաց՝ երիցագոյն է քան զերուսաղէմին յօրինուած յիպլլենէ, որպէս և երիցագոյն են նոքա քան զսա՝ որ մեռաւ յելս 1266 ամին. իսկ թէ զիսորդ ոչ յիշատակիցէ նա զԱնտիոքայ Աստիղքս՝ զայն թողաք մանաւոր յայտասիկ պարապողաց ինչորեւ: Արդ Սմբատայ թարգմանութեանն ժամանակ՝ ըստ նախ ակնարկութեանս՝ յառաջէ քան զ'1265 թուականն, այլ թէ որչափ՝ ոչ ունիմ ասել, և ոչ այլ ինչ. բայց սակաւ մի ևս զընդունէն թարգմանութեան Սմբատայ և զընագրին: Յայտ է թէ սա փռանկեւրէն էր, թէ և յայտնապէս չասիցէ թարգմանին. այլ ինքնին յայտ առնեն զայն փռանկ բառք անփոփոխ պահեալք 'ի թարգմանածն: Ընդ սակաւուց այնոցիկ փռանկ բառիցն, զորոս հարկ համարեալ է վարել վասն ողջ և որոշակի զիմաստ Աստիղքսն պահելոյ, — որ դարձեալ յայտ առնէ և զայն ժամու Հայոց կիլիկիոյ ընտելութիւն այնր արեւմտեան լեզուի, — 'ի կիր առնու Սմբատ ուրեք և թուրք կամ արարիկ բառս, որպէս Զաւլաշ, Տիւմակաշաշի, Իշաշ, և այլն, զնախաւ մուտսն քան զԺանօթութիւն Աստիղքս՝ 'ի Հայոս, յերկար ընտանութեամբ և հպատակութեամբ արաբացի և սկիւթացի տիրապետաց. այլ ընդհանուր լեզու Սմբատայ, որպէս և այլուր յիշեցաք, պարզ հայկաբան է ըստ աշխարհիկ յստակ խօսից ժամանակին, ոչ կարի հեռի 'ի գրաբառէն: Ոչ միայն նկատելի այլ և յոյժ զարմանալի և դուռատելի է դործ ընտրութեանդ Սմբատայ, և ժողովրդասէր հնարքն, որով և յառաջագէմ բնաւից գտանի. զի թէ և այլք ոմանք յօգուտ հրահանգի ժողովրդեան զիջան 'ի գիւրալուր բարբառ նոյնն գրել, սա զտղոյն իսկ զերեսին գիրսն պիտանիս զերկասիրեալն յայլոց 'ի գրոց լեզու՝ եյեղ և վերածեաց յաշխարհօրէն լեզու. զոր ոչ այլոյ ուրուք 'ի մերոցս յայն մերձաւոր ժամանակս արարեալ գիտեմք. և չիցէ 'ի դէպ ասել ըստ ոճոյ մերոյ ժամանակիս, եթէ բազում դարուք կանխեալ էր լուսաւորութիւն մտաց Սմբատայ: Բայց

քան զճարէգիրսն և զՕրինագիրս՝ դժուարանան մեզ Աստիգըդ 'ի հասկացումն, և վասն կուռ և կարճ ասիցն, և վասն նորութեան իրացն և սովորութեանց, որք չենն մեզ քաջածանօթք, այլ և յաղադս բառից ինչ և ոճից՝ որոց արտաքոյ այսց գրոց չէր մեզ հանդիպեալ. յորմէ գուշակիցեն ընթերցողք թարգմանութեանս մերոյ՝ զի ոչ առանց աշխատութեան եղև մեզ այն, և 'ի վերայ ամենայն ջանից մերոց՝ չեղաք բաւական ուրեք 'ի վերայ հասանել բանին կամ բառին, որպէս և նշանակեալ է մեր 'ի ծանօթութիւնս հրատարակութեան մերոյ. իսկ եթէ և այլուր յանգագատից վրիպեալ իցեմք և ստուգեսցէ որ ներդրութիւն խնդրեմք և շնորհս մատուցանեմք. համարձակապէս վկայելով զայս, զի ջանացաք հաւատարմութեամբ թարգմանել, ոչ եղեալ ուշ ընտրութեան ասացուածոյ լեզուին յոր յեղաքն՝ զանտուտ վաղ ուրեմն յեղեալն 'ի Սմբատայ 'ի մերս բարբառ. յորմէ՝ ըստ տարադէպ իմն բաղդի, վերընծայեալ 'ի բարբառ բնագրին՝ զկորուստ նորին սփոփիցէ յետ 600 ամաց, իսկ զհաւատարմութիւն առաջին թարգմանութեանն, զՍմբատայն ասեմ, ինքնին վկայէ, զի վոխեալ 'ի հայ՝ առաքեաց ընդ բնագրին յԱնտիոք առ գիտունս երկոցուն լեզուացն, որք « զիմ « ընդգրկեցին և հաստատեցին իրենց ձեռնգրերովն և վկայութեամբն, ու ստոյգ « է և ըզորդ բան բանի » :

Յաւելից և բան մի ասել զկոյմանէ Աստիգաց և զծանօթութենէն 'ի Հայս. յայտ է ամենայն բանագիրտաց՝ զի ցարդ առ Եւրոպացիս այդպէս կոչին բանք և քննութիւնք դատողական ատենից, յորմէ և մատեան դատաստանական օրինացն էառ զկոյումնդ, որ 'ի ճագի զայ մերումս Դատաստանագիրք կոչմանս, ի հասարակի յոքնականան վարի բառդ առ արեմտեսոյս (Assises), այլ Սմբատ յեզականն միշտ գրէ. և զանունն ևս այլալէ ներածութեամբ և տառի միոյ, ամենայն ուրեք անփոփոխ Անսիզ գրելով, և Անսիզվոր, որ ցուցանէ զ'ի վաղուց մուտս անուանն 'ի լուր և 'ի լեզու մերասեռիցս Կիլիկեացոց և զխանգարումն ըստ ռամկական սովորութեան¹ : Ոչ միայն անուամբ՝ այլ և ատենական կիրառութեամբ ծանօթացեալ զԱսիզոս յայտ արար մեզ թարգմանողն 'ի յառաջաբանին, որոց և ինքն պատկառ եկաց 'ի խնդրի անդ պայապատութեան Կոռիկոսի. այլ բաց յիւրոց բանից և 'ի դիպացդ՝ ոչ ուրեք որոշակի ինչ գտաք յիշատակ անուան և կիրառութեան օրինացդ 'ի մերս. բայց դարձեալ առ սմին ինքեան Սմբատայ, յ'ի զլուսն Բ մասին գրոցս ընթեռնումք ասացեալ (վասն դիւտի զբաստու կորուսելոյ), « Առնու (տէրն) զինքն Երկրիս Անսիզովն և Անս. « տաքոյ » . զոյին ուրեմն և երկրի մերոյ Հայոց առանձինն Աստիգը, այսինքն Դատաստանագիրք, թէ Միխիթարայն և թէ այլ ինչ, Այսմ փաստ հաստատութեան ընծայի և այլուստ. զի որպէս յիշէ Սմբատ բազում ուրեք 'ի գիրս յայս՝ զատ յԱստիգաց և Սովորական իրաւունս կամ իրաւներ, նմանապէս և 'ի Կարդի Թագաւոր — Օրհնէից մերոց ասի. « Եւ Կաթողիկոսն տայ երդնու ընտրելոյն « (թագաւորին) 'ի վերայ Սովորական իրաւունցն » :

Այլ քանզի խնդիրս այս կարևոր 'ի ծանօթութիւն քաղաքական կենաց մերոյ նախնեաց օտարացուցանէ զմեզ 'ի նպատակեալ առաջարկութենէս,

¹ Բայց ըստ ոմանց և Փոանկք 'ի հնուին Assises գրէին.

չառ համարեալ որ ինչ զՊատիշտաց բան, դարձցուք յետին անդամ ակնարկել 'ի Սմբատ եւ 'ի մնացեալ ինչ գրաւոր յիշատակ նորին եւ յոնձնականն, վերջին գրաւորական ծանուցեալ մեզ բան Սմբատայ դտանեմ զինքնագիր դրուն ձեռաց գիր Յիշատակարան մի նորա 'ի ճաշոց զիրս, յամի 1266—9, զոր թուի տուեալ գրել վասն իւրաչէն եկեղեցւոյ միոյ. եւ է գրածն ոտանաւոր ութոտնեայ¹, յաւում եւ զազատոհմն իւր յիշէ, եւ զազտալի դէպս պատերազմին Մառեայ. այլ առաւել եւ զիւր բարեպաշտութեան ոգին, որ եւ 'ի յիշատակս ինչ տարեգրոցն եւ 'ի յառաջաբանի Օրինագրոցն, որպէս եւ 'ի կարգին, մանաւանդ ուր եւ կեղեցականաց կանոնք իցեն, բացերեակի ճանաչի. յորմէ եւ գուշակի բազում յիշատակարանս սրբազանս կանգնեալ նորա եւ սպասս նուիրեալ. մի 'ի շինուած ծոցն՝ հաւանիմ կարծել զանուանեալն Գոռնդատալլի եկեղեցի 'ի մայրաքաղաքն 'ի Սիս, նուիրեալ սրբոյ Նախավկային. քանզի ում այլ ումեք ճահագոյն էր Գոռնդատալլի անուամբ անմահանալ՝ քան թէ Սմբատայ, որ իւր յիսնեբեակ ամօք եւ բազում փառք կրեաց զանունն զսոյն եւ զպաշտօն: Բազում եւ 'այլ յիշատակարանք նմանիք յայսնեսցին Սմբատայ՝ յորժամ Կիւլիկիա հետախուզես.

1 Փառք Աստուծոյ ամենայնի,

Գոյիցս էիցս արարաւորի.

Որ ինքն է մէն, վայլ չըլինի,

Տէր եւ պարոն անփոխելի:

Ի թվականին Հայոց գրեր

Յիւսէն հարոյր տանիւթնի

Եւ Սմբատս Հայկազնի

Մառայս եւ հոգս Քրիստոսի,

Եւ սպայապետ Հայոց գնդի,

Տէր ամրոցիս Պապէռաւնի,

Անդրանիկ հաւրն իմ Կոստանդնի,

Եղբայր Հեթմոյ Թաղաւորի.

Որ ցանգացաւ եւ սիրեցի

Ձմայրն իմ զսուրբ եկեղեցի.

Եւ զինչ 'ի նմա իսկ ընթեռնի

Ամբողջ 'ի լման 'ի մէկ տարի,

Ձամենն 'ի ամա հավաքեցի.

Հայնց որ ով ոք որ զսա ունի՝

Նա բնաւ 'ի յայլ գրեր չանգի:

Բայց եւ զայս այլ գրել պիտի

Թէ երբ սկըսաք կամկատրեցի

Ձաստուածային տառս 'ի կարգի:

Սկիզբն էր 'ի չար ժամանակի,

Երբ Մարցին եկն 'ի Մառի,

Վ'եապան զԹորոս Թագաւորդի,

Եւ այլք բազումք 'ի նոյն զինի,

Վ'այրեց զՍիս եւ զՄսիս

Եւ զինչ որ չէն կայր 'ի միջի.

Եւ զԼեւոն աւագ որդի

Հեթմոյ Հայոց մեծ արքայի՝

Տարաւ ծառա վեգ 'ի բանտի

Ի քաղաքին Եգիպտոսի:

Բայց զոր ածեմ աստ 'ի գրի

Ձառ եւ աւար եւ զարոյնի,

Կամ զճամարքն ծառայի,

Ղորս ըստ մեղաց հնաս երկրի.

Որ թէ զամեն գրել էի՝

Նա շատ առնոյր թուխթ եւ տեղի:

Բայց յաջողմամբն Քրիստոսի

Ի վերոյգրեալն թվականի

Որ զընթերցվածքս կատրեցի,

Ձեռամբ գրչին Կիրակոսի,

Ձերծաւ Լեւոն Թագաւորդի

Վ'երեկ 'ի յիւր տուն եւ տեղի:

Եւ զայս ձեռամբ իմով գրեցի

Ձի յիշատակ ինձ եղիցի,

Տրուպ եւ անդեղձ մեղաւորի

Սմբատայ Գունուատալլի.

Հաւր իմոյ Կոստանդնի

Եւ մաւր իմոյ Տամ Ալեծի,

Եղբարց եւ քերց նաեւ ազգի.

Ձնոյն եւ որդւոց իմում զինի,

Հեթմոյ, Աւշի եւ Կոստանդնի,

Եւ մաւր սոցին Թէֆանաւի:

Որ որ գըթան վ'ասն բարի,

Կամ զղձալեց՝ Տէր Ողորմի,

Նա՝ ուստաձիւր Տէրն ամենի

Բազմապատիկ տայ իւր բարի

Աստ 'ի ներկայս այժմ եւ զինի:

ցի այնու խնամով՝ զոր պահանջին պարտք հայրենասէր Հայոց, և կարեւորութիւն երկրի սերտ իմն սղգակցի երկրին խաչակրաց ¹:

Հուակ վերջին ակնարկութիւն մեր եղիցի յանձինս նշանակեալս 'ի Սմբատայ յիսկազիր Յիշատակարանի շաշոցին. յորս՝ հայրն և եղբարքն քաջածանօթք էին մեզ. իսկ մայրն՝ զոր նոր գաղափարողք գրուածոյն Տաւա Վիճի ընդօրինակեն, և չեղև այժմիկ հնար միւսանգամ ստուգել 'ի բնագրէն, թուի ինձ թէ Տաւ Ուիճի ընթեռնի էր, և էր գուտոր Հեթմայ Լամբրոնացոյ: Կին Սմբատայ Թեփանէ որ է Ստեփանիա, չասի յորմէ տոհմէ լինել, այլ թուի ինձ յազնուացն Անտիոքայ, Թերևս և քոյր բարեկամին իւրոյ և համապատուի Սիր Սիմոնի Գունդստապլի, քանզի արեան մերձաշոր իւր կոչէ զսա 'ի յառաջարանի Աս:

¹ Զայս այսպէս գրեալ մեր բազում ամօք յառաջ մինչդեռ պատրաստէսք զԹարգմանութիւն Աստիղացն, կրկին հաճութեամբ տեսաք սպա զմտաւորուտ ստուգութիւն գուշակութեանս մերոյ՝ գեղեցիկ գիւտիւ արձանագրին Սմբատայ 'ի լերինս Տաւրոսի, 'ի ձեռն Հ. Կղեմայ Վ. Սի. պիւեան. զոր և 'ի սկզբան բանիցս յիշեցաք՝ 'ի ճառէն զՊապեոսն բերդէ, յորում ծանեաք և զչինութիւն ձեռակերտ եկեղեցւոյ տեղւոյն, որոյ գծուաւրութիւն վայրաց, Թերևս և Ժանիք Ժամանակի դոյն ինչ Թերակատար Թողուն զընթերցուածն, գուցէ այլոյ պատեհի մնալով լրմանն:

Եւ այս է արձանագրին ըստ օրինակողին և ըստ մերս ինչ կարծեաց.

Շինեալ զտաճարս բնակարան

Նրորորդութեանն միական

Աստուած ընկալ տուն եւ սեղան,

Տեղ աղաւթից եւ լուացարան

Այնոց մեղացն որք հաւատան

Հայցել 'ի սա դեղ մաքրութեան.

Յորս է Թագաւոր 'ի Հայաստան ¹

Հեթում եղբայրս իմ պանծական,

Ստացա շինել վէճ գլուխ անկեան

Բազում ծախիւք եւ սրբաբան,

Սմբատ անունս Հայկազան

Տէր գղեկին հայրենական.

Եւ Գունդստապլս զինական:

Զորս աղաչեմ զամենեւեան ²

Բարեխաւսել մեղաւորին ³

Յիշել եւ զծնողս իմ աթոյս. ⁴

ԶԱրտանդինս մեծ իշխան

Զեղբայր զորդի եւ զաղջական:

Եւ պարգեւողն առատական... ⁵ ...

Ի մեծ թվականս 2 եւ 13? ... ⁶

Ի Ռուբինեան զարմէն տենչական: ⁷

. զայս բան.

Որ զիս յիշէք յետ հանգըստեան:

¹ Օրինակն, « Յորս է Թագաւորի Հայաստան »:

² Օր.... « Որս աղաչեմ զամենեւեան »:

³ Օր. « Բարեխաւսել մեղաւորին »:

⁴ Օր. « Յիշեալ եւ զծնողս իմ... ամաց... այսր »:

⁵ Յայտ է թէ պակասէ աստանօր բան, որպէս, Տացե բարիս, և այլն:

⁶ Նրբայրի և օրինակողն ընդ Թուականդ, այն զի ոչ կաղմէ յանդ նմանաձայն՝ ան, որպէս կազմէր թիւն ԺԵ, հսկեալսս:

⁷ Այսպիսի է տողք 'ի կարգին, նա և այլուր նշմարի այլայլութիւն կարգի կամ տեղագիտութիւն տողից:

սիզացն : իսկ յորդուցն զերիս աստանօր յիշէ Սմբատ, զՀեքում, զՈշին և զԻսա-
ռանդին . այլ զարմանք են ինձ զի 'ի ստոյգ պատմութիւնս և 'ի յիշատակա-
րանս՝ յաճախադոյն ևս յիշի որդի նորա Լեւոն, որ և պայազատեացն զհայրենի
իյնանութիւն սպարապետութեանն, և ցամն 1289 դտանեմք զնա Գունդատա-
պի յորընդմամբ յիշատակեալ . երկանուն արդեօք էր Լեւոնդ, եթէ բան պակասի
'ի Յիշատակարանի այդր Սմբատայ, ոչ գիտեմ ասել . բայց Լեւոնի յիշատակի և
սերունդն, և է նախահայր 'ի դստերէն (իւրմէ Մարիւնայ) Կոստանդնի Դ յե-
տին բնիկ թագաւորի Հայոց (1344—1365), յորոյ որդիս սպառի, ըստ մերս գի-
տութեան, ամենայն զարմն տոհմին Սմբատայ, նաև երկոքին որդիք Կոստանդ-
նիս վերջնոյ՝ Օշին և Լեւոն՝ թուին առաջի հօր իւրեանց վախճանեալք, զի ոչ
գտաւ նմա հարազատ յաջորդ թագաւորութեան 'ի մահուն իւրում . յորում ժա-
մանակի զբաւեալ էր ամենայն արուզաւակ արքածին ցեղին Հեթմանց : — Ար-
տաքոյ չորեցուն սոցա որդւոց Սմբատայ՝ որդի մի ևս յայտնեցաւ 'ի նորագիւտ
տարեգիրան, Վասիլ՝ Թաքար մականուանեալ, ոչ գիտեմ անգստին 'ի տղայու-
թենէն՝ սակս ծնանելոյ յերթի կամ 'ի դարձի հօրն 'ի Թաթարաց, եթէ վասն այ-
լոյ իրիք . 'ի միում ամի վախճանեցան, սա 'ի նորափթիթ տիս երիտասարդու-
թեան, և աւագ եղբայր իւր Հեթում՝ առաջի հօր իւրեանց, յամի 1269, յետ
սակաւ ժամանակի ձեռնադրելոյ սորա զՅիշատակարան իւր : — Եւ այս այսչափ
շատ լիցի վասն ազգատոհմին Սմբատայ :

Փարտ և պաշտած էր մեզ յետ այսքան բանից յիշատակաց՝ մատչել լրջա-
միտ պատկառանք իւր 'ի յետին ողջոյն բարեաւ մնայից, 'ի հանգստարան անդր
անհանգիստ վաստակաւորին մերոյ և նահատակազգեաց Սպարապետի Սմբա-
տայ . և զայն՝ սգալի և սխրալի իմն բաղդիւ սքողեալ թաքուցանեն բաղք՝ թուի
խորհրդականք . զի մինչ մանրապատում իմն նշանադրեալ կան օրինակ մահու
նորա և թուականք տարւոյն և ամսոյն, տեղի քնարանին Սմբատայ վրիպի յի-
նէն . մի արդեօք կամաւ լռեցին պատմիչքն, զի մի այլազգեացն թշնամեաց՝ յոր-
մէ կենդանեաւն ոչ կարացին ըստ ախորժակի իւրեանց լռեմանել վրէժս, վասն
բազում ուժոյ նորա և հարուստոց անքուն սուսերին, յետ մահուանն լիցի ոտն
հարութիւն վատչուէր : Եւ թէպէտ ինձ հաւանելի է 'ի Միհայ վանս լինել զրից
նշխարաց նորին՝ զի այն էր հանգստարան իշխողաց Պապեռօնի, յոր և մերձ
են վանքդ, և յորում վկային թաղեալ երկոքին որդիք նորա վաղամեութիւնք՝ Հե-
թումն և Վասիլ-Թաթար, այլ ես առաւել ևս աներկբայութեամբ հաւանիմ,
եթէ վաստակք նորա բազումք, և ծանօթքս այս երկասիրութիւնք, և յաւէտ Աս-
սիքքս Անտիօքայ, երախտագիտութիւն ազգայնոցս և արգադիր ընդունելութիւն
օտարաց, և մանաւանդ փռանկացն, ծանիցեն քալ զբուն կայս և դիրս նորա՝ 'ի
կաճառս անմահացելոցն իսկական արդեամբք և արութեամբ :

Հ. Դ. ԱԼԻՇԱՆ